ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 533-Հ «8» ապրիլի 2022թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ (ՀԱՎԱՍՏԱԳԻՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 483-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմանբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2010 թվականի մայիսի 18-ի N 393-Ն հրամանի հավելվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով իրականացվող վերապատրաստման հարցաշարը՝ համաձայն Հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2021 թվականի ապրիլի 23-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով իրականացվող վերապատրաստման հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարի՝ 2020 թվականի սեպտեմբերի 28-ի N 1307-Ա/2 և 2021 թվականի ապրիլի 19-ի 461-Ա հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 483-Ա հրամանը:

3. ՀՀ ԿԳՄՍ նախարարի մամուլի քարտուղար Գեղամ Մելիքբեկյանին՝ հրամանը տեղադրել նախարարության պաշտոնական կայքում:
4. «Կրթություն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Գ. Մինասյանին՝ հրամանը հրապարակել շաբաթաթերթի առաջիկա համարում:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

4/8/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211